


Կիսամյակային գրավոր աշխատանք 2-ի համար նախատեսված առաջադրանքների օրինակներ¹ (Այս բաժինը դեռ պետք է համալրվի՝ ինչպես առաջին կիսամյակինը)

1. Դիտի՛ր նկարը: Կարմիր շրջանակի մեջ վերցրու՛ ա՛յն, ինչը մարդն է պատրաստել, իսկ կապույտ շրջանակի մեջ ա՛յն, ինչ որ կա բնության մեջ: 2Շ.Բ.Բ.01ա (միջին, գիտելիք, հմտություն)



¹ Հեղ. Լուսինե Ալեքսանյան «Ես և շրջակա աշխարհը» առարկայի գնահատումը, թեմատիկ և կիսամյակային և ամփոփիչ հարցաշարերի շտեմարան, 2-4 դասարանների համար, Եևան 2010թ, հեղինակային հրատարակություն:

2. Որոշի՛ր, նշված օբյեկտները մարդու ստեղծած են, թե բնության ստեղծած և գծերով միացրու՛ համապատասխան խմբին: **2Շ.Բ.Բ.01ա** (միջին, գիտելիք, հմտություն)

ջրվեժ կամուրջ աթոռ գետ ծաղիկ լուսին

մարդու ստեղծած

բնության ստեղծած

շենք ծառ մեքենա ժայռ անձրև մարդ համակարգիչ

3. Որոշի՛ր, նշված օբյեկտները կենդանի բնություն են, թե անկենդան և գծերով միացրու՛ համապատասխան խմբին: **2Շ.Բ.Բ.01գ** (միջին, գիտելիք, հմտություն)

ագռավ քար արջ ջուր ծաղիկ լուսին

անկենդան բնություն

կենդանի բնություն

ամպ ձուկ սունկ հող անձրև մարդ ծառ

4. Որոշի՛ր, թե որ հատկություններն են հատուկ միայն կենդանի բնությանը և ընդգծի՛ր: **2Շ.Բ.Բ.01գ, 2Շ.Բ.Բ.01դ** (բարդ, գիտելիք, հմտություն)

ծնվում են, անշունչ են, աճում են, բազմանում են, հոսում են, ցնդում են

շնչում են, փոխում են ձևը, սնվում են, փոխում են չափերը, մահանում են

5. Ծառը և կենդուրուն շատ տարբեր տեսք ունեն, բայց երկուսն էլ համարվում են կենդանի բնություն: 2Շ.Բ.Բ.01գ (բարդ, գիտելիք, հմտություն)





Ինչու: Գրի՞ր երկու հիմնավորում:

1. _____

2. _____



6. Ի՞նչ է անհրաժեշտ բույսի աճի համար: Ընդգծի՛ր: 2Շ.Բ.Բ.02, 2Շ.Բ.Բ.Ա2 (միջին, գիտելիք, հմտություն)




7. Ո՞վ է ճիշտ խնամում իր բույսերը: 2Շ.Բ.Բ.02 (բարդ, գիտելիք, հմտություն)

- Անահիտը իր տնային բույսերը դրել է մուգ տեղում և միշտ հիշում է ջրել:

- Սահակը բույսերը դրել է լուսավոր տեղում ու երբեմն մոռանում է ջրել:
- Արմենը բույսերը դրել է լուսավոր տեղում ու միշտ հետևում է, որ կարիք եղած դեպքում՝ ջրի դրանք:

Ո՞վ է ճիշտ խնամում և ինչու՞, մեկնաբանի՛ր

8. Բույսերն ըստ արտաքին հատկանիշների բաժանի՛ր երեք խմբի, գրի՛ր այդ խմբերի անվանումները, իսկ յուրաքանչյուր խմբի դիմաց գրիր դրան համապատասխան համարները: 2Շ.Բ.Բ.Կ1 (բարդ, գիտելիք, հմտություն)



1. _____
2. _____
3. _____

9. Նկարում պատկերվածներից որո՞նք են ընտանի, որոնք՝ վայրի կենդանիներ:
 Լրացրու՝ աղյուսակը, եթե կարող ես՝ նաև շարունակիր ցանկը: 2Շ.Բ.Բ.Կ1ա (միջին, գիտելիք, հմտություն)



Ընտանի կենդանիներ	Վայրի կենդանիներ

10. Ո՞րն է կենդանի բնություն: 2Շ.Բ.Բ.Օ1գ (պարզ, գիտելիք, հմտություն)

- Ա գետ
- Բ արծիվ
- Գ արև

11. Ո՞րն է անկենդան բնություն: 2Շ.Բ.Բ.Օ1գ (պարզ, գիտելիք, հմտություն)

- Ա սկյուռ
- Բ մարդ
- Գ սար

12. Ո՞րն է անկենդան բնություն: 2Շ.Բ.Բ.01գ (պարզ, գիտելիք, հմտություն)

Ա ձոր

Բ արջ

Գ ծառ

13. Ո՞րն է կենդանի բնություն: 2Շ.Բ.Բ.01գ (պարզ, գիտելիք, հմտություն)

Ա ամպ

Բ լուսին

Գ մեղու

14. Առանց ինչի՞ բույսերը կչորանան: 2Շ.Բ.Բ.02 (պարզ, գիտելիք, հմտություն)

Ա լուսնի

Բ միջատների

Գ ջրի

15. Ո՞ր բույսերն է, որ ունեն մեկ ամուր, փայտյա ցողուն: 2Շ.Բ.Բ.41 (պարզ, գիտելիք, հմտություն)

Ա խոտաբույսերը

Բ թփերը

Գ ծառերը

16. Ծառերից ո՞րն է աշնանը տերևաթափ լինում: 2Շ.Բ.Բ.41 (պարզ, գիտելիք, հմտություն):

Ա եղևնի

Բ բարդի

Գ սոճի

17. Ո՞ր ծառն է ամառ, թե ձմեռ կանաչ: 2Շ.Բ.Բ.Կ1 (պարզ, գիտելիք, հմտություն)

Ա սոճի

Բ կաղնի

Գ սոսի

18. Ո՞ր բույսերի ցողուններն են հյութալի և փափուկ: 2Շ.Բ.Բ.Կ1 (պարզ, գիտելիք, հմտություն)

Ա ծառերի

Բ թփերի

Գ խոտաբույսերի

19. Ո՞ր հատկանիշներն են վերաբերում կենդանի բնությանը: Վերցրու՛ օղակի մեջ: 2Շ.Բ.Բ.Օ1գ, 2Շ.Բ.Բ.Օ1դ (միջին, գիտելիք, հմտություն)

ա) ծնվում են

ե) աճում են

բ) բազմանում են

զ) չեն սնվում

գ) անփոփոխ են

է) մահանում են

դ) չեն շնչում

20. Ինչո՞վ են նման կամ տարբեր բույսերն ու կենդանիները: Նշի՛ր երկու նմանություն և երկու տարբերություն: 2Շ.Բ.Բ.Կ4, 2Շ.Բ.Բ.Օ2, 2Շ.Բ.Բ.Կ4ա (բարդ, գիտելիք, հմտություն)

Նման են

Տարբեր են

21. Ո՞ր կենդանուն չես հանդիպի ձմռանն անտառում: 2Շ.Բ.Բ.Փ1ա (միջին, գիտելիք)

Ա գայլի

Բ նապաստակի

Գ փորսուղի

Ինչու՞

22. Նշի՛ր, թե որ կենդանիներն են ընտանի: 2Շ.Բ.Բ.Կ1ա (միջին, գիտելիք, հմտություն)

ա) ձի դ) վագր է) մեղու

բ) արծիվ ե) հավ ը) վարազ

գ) խոզ զ) ընձուղտ թ) շուն

23. Մարդն ինչն է ստանում բնությունից, ընդգծի՛ր: 2Շ.Բ.Բ.Օ1բ (միջին, գիտելիք, հմտություն)



Սնունդ, մեքենաներ, վառելիք, ընկերություն, շինանյութ,

պլաստմասսայից տարաներ, դեղաբույսեր, ընտանիք, արևի




ջերմություն, փողոցներ, ջուր, գեղեցիկ տեսանրաններ, սեր և

հոգատարություն

24. Ինչպես կանվանես երկրի մակերևույթի ռելիեֆը այս նկարներում անվանի՛ր և համապատասխանաբար գրի՛ր յուրաքանչյուր նկարի տակ: 2Շ.Բ.Բ.Ա1 (միջին, գիտելիք, հմտություն)



25. Գծով միացրու, թե բնակության որ միջավայրը, որ կենդանուն է համապատասխանում: 2Շ.Բ.Բ.Օ1, 2Շ.Բ.Բ.Ա2ա (միջին, գիտելիք, հմտություն)

<p>Ուղտ</p> <p>Կապիկ</p> <p>օձ</p>	<p>Անապատ</p> 
<p>ձուկ</p> <p>կարիճ</p> <p>արջ</p> <p>գորտ</p>	<p>Անտառ</p> 
<p>գալլ</p>	<p>Լճակ</p> 

26. Գրի՛ր տարվա ամիսներն ըստ եղանակների: **2Շ.Բ.Բ.Փ1** (միջին, գիտելիք, հմտություն)



Ձմեռ



Գարուն




Ամառ



Աշուն

27. Նկարների տակ գրի՛ր տարվա այն եղանակը, երբ կատարում են նկարում պատկերված գործը: **2Շ.Բ.Բ.Փ1ա** (միջին, գիտելիք, հմտություն)

 <p>Ծառատունկ են անում</p>	 <p>Բերքահավաք է սկսվում</p>	 <p>Կենդանիների արոտավայր են տանում</p>
<p>_____</p>	<p>_____</p>	<p>_____</p>




Արտերը հնձում են	Վառելիք են հավաքում	Փողոցները մաքրում են ձյունից
_____	_____	_____

28. Լրացրու՝ բաց թողած տարվա համապատասխան եղանակի անունը: **2Շ.Բ.Բ.Փ1**
(միջին, գիտելիք, հմտություն)

- Օրերը ցրտել են ու կարճացել, թռչունները չվում են տաք երկրներ: _____ է:
- Գիշերները կարճ են, իսկ օրերը երկար են ու շոգ: _____ է:
- Չորս կողմը ծածկված է ձյունով, շուտով կգա Նոր տարին: _____ է:
- Ձյունը հալվել է, օրերը տաքացել են, թռչունները վերադարձել ու բույն են շինում: _____ է եկել:

29. Նայի՛ր նկարներին և նկարագրիր պատկերված եղանակը, նկարագրի՛ր, թե ինչպես կհագնվես, կամ ինչ կանես նման եղանակին: **2Շ.Բ.Բ.Փ1բ** (բարդ, գիտելիք, հմտություն, վերաբերմունք)





30. Կենդանիներն ու բույսերը շարիր հերթականությամբ այնպես, որ ստացվի սննդային 2-3 շղթա: 2Շ.Բ.Բ.Կ4 (բարդ, գիտելիք, հմտություն)

խոտ, ճնճղուկ, բազե, միջատ, կաղնի, վարազ, կաղին, անգղ, ցորեն, որդ, աղվես հավ

31. Հայկական բնաշխարհում կան բազմաթիվ բույսեր և կենդանիներ, որոնք գրանցված են Կարմիր գրքում: Ի՞նչ է դա նշանակում, և ինչպես պետք է վարվեն մարդիկ, բացատրի՛ր: 2Շ.Բ.Բ.Փ2.3 (բարդ, գիտելիք, հմտություն, վերաբերմունք, արժեք)

32. Նշի՛ր, թե որ գործողությունը չի վնասում բնությունը: 2Շ.Բ.Բ.Փ2 (միջին, գիտելիք, հմտություն, վերաբերմունք, արժեք)

- Որս
- Անտառահատում

- Ծառատունկ
- Ձկնորսություն

- Ո՞վ է բնությանը վնաս տվող բոլոր գործողությունները կատարողը՝ _____

33. Ո՞վ է խնայում, ո՞վ է վատնում: Խնայող վերաբերմունքը նշի՞ր «+» նշանով, իսկ վատնող վերաբերմունքը՝ «-» նշանով: 2Շ.Բ.Բ.Փ2, (միջին, գիտելիք, հմտություն, վերաբերմունք, արժեք)

- Արեգն ամեն անգամ ջրի ծորակը բաց է թողնում:
- Անին օգտագործած թուղթը հավաքում է և հանձնում երկրորդային մշակման:
- Վարդուհին տանից դուրս գալիս լույսը չի անջատում:
- Տատիկը հնացած հացից պաքսիմատ է պատրաստում:
- Փայտամշակման գործարանը ամեն կտրած ծառի փոխարեն մեկ ծառ է տնկում:
- Մայրիկը ապակուց դատարկ շշերը հանձնում է երկրորդային մշակման:
- Կարենը տանից դուրս գալիս լույսը չի անջատում:
- Արմենը ձմերուկը հոսող ջրի տակ է դնում, որ սառչի:
- Սոնան ճաշը կիսատ է թողնում:

34. Նկարի փոխադրամիջոցներից ո՞րն է ավելի լավ շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից:



Հեծանիվ



Ավտոմեքենա

35. Առարկաների ո՞ր զույգն է լույս արտադրում: 2Շ.Տ.Շ.ՁԼ2 (բարդ, գիտելիք, հմտություն)

Ա մոմ և լուսին

Բ լուսին և հայելի

Գ արև և մոմ

Դ հայելի և արև

36. Հրու՛մ ես, թե՛ ձգում: 2Շ.Տ.Շ.ՈՒ1ա (միջին, գիտելիք, հմտություն)

- Ուզում ես բացել խոհանոցի դարակը... _____
- Ուզում ես փակել դարակը... _____
- Երբ ուզում ես հողից հանել շաղգամը... _____
- Երբ ուզում ես ընկերոջդ նետել գնդակը... _____
- Երբ ուզում ես տեղից շարժել ծանր քարը... _____
- Երբ ուզում ես օգնել փոսն ընկած ընկերոջդ... _____
- Երբ ճոճում ես ճոճանակին նստած ընկերոջդ... _____

37. Ո՞րն է հրելու և ձգելու միջև տարբերությունը, բացատրի՛ր: 2Շ.Տ.Շ.ՈՒ1ա, 2Շ.Տ.Շ.ՈՒ1բ (բարդ, գիտելիք, հմտություն)

38. Ինչպե՛ս կտեղաշարժես կանգնած խաղալիք մեքենան, բացատրի՛ր: 2Շ.Տ.Շ.ՈՒ1ա (միջին, գիտելիք, հմտություն)

39. Արմենը ոտքով հարվածեց գնդակին:



Այն շատ հեռու չգնաց: Արմենը ստիպված էր ավելի մեծ ի՞նչ օգտագործել, որպեսզի գնդակն ավելի հեռու տեղափոխվեր:

- գնդակ
- կոշիկ
- ուժ

40. Սուրենը գնում է սահնակով սահելու:



Ինչպե՞ս է Սուրենը տեղափոխում իր սահնակը.

- հրում է
- ձգում է

41. Սոնան հրում էր Աննայի ճոճանակը:



Սկզբում Սոնան թույլ էր հրում, հետո ավելի ուժեղ հրեց: Ի՞նչ կկատարվի:

- Աննան ավելի արագ կճոճվի
- Աննան ավելի դանդաղ կճոճվի